ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԼՈՐ ՍԵՂԱՆՆ ԱՅՍՈՒՀԵՏ ԿԳՈՐԾԻ ՈՐՊԵՍ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հոկտեմբերի 6-8-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի (ԵՀԽ) Հայաստանի Կլոր Սեղանի կենտրոնական հանձնախմբի տարեկան հաշվետու ժողովը:

Ժողովի բացմանը ներկաներին ողջունեց Ամենայն Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը բարձր գնահատեց Կլոր Սեղանի գործունեությունը՝ ընդգծելով նրա բերած նպաստը Հայաստանի բարգավաճմանը: Հայաստանի ներկա քաղաքական-տնտեսական վիճակի մասին զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ ԱԳՆ փոխնախարար Ռուբեն Շուգարյանը:

ԵՀԽ Հայաստանի Կլոր Սեղանը Մայր Աթոռի հովանու ներքո ստեղծվել է դեռևս 1997 թ.՝ երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնությամբ: Այս տարիների ընթացքում ԵՀԽ հայաստանյան ներկայացուցչությունն իրականացրել է գյուղատնտեսական, կրթական, եկեղեցաշինական, սոցիալական և վարկային բազմաթիվ ծրագրեր:

Եռօրյա նիստերի ընթացքում ժողովականները՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, Հայ Կաթոլիկ և Հայ Ավետարանական Եկեղեցիների, ԵՀԽ-ի, եվրոպական էկումենիկ կազմակերպությունների (Շվեյցարիա, Գերմանիա, Նորվեգիա և այլն), ինչպես նաև հայաստանյան բարեգործական հասարակական տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, քննարկեցին Կլոր սեղանի կողմից իրականացված ծրագրերն ու դրանց արդյունավետությունը:

Ժողովի ավարտին ստորագրվեց մի փաստաթուղթ, ըստ որի ԵՀԽ Հայաստանի Կլոր Սեղանն այսուհետ կգործի իբրև բարեգործական հիմնադրամ՝ «Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր Սեղան հիմնադրամ» անվամբ: Տեղի ունեցավ նաև նորաստեղծ կազմակերպության հիմնադիր ժողովը, որի որոշմամբ կազմակերպության հոգաբարձուների խորհրդի կազմում ընդգրկվեցին ներկայացուցիչներ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուց (ի դեմս Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանի, Տ. Փառեն եպս. Ավետիքյանի և Տ. Վահրամ քհն. Մելիքյանի), Հայ Ավետարանական և Հայ Կաթողիկե Եկեղեցիներից, ինչպես նաև «Շեն» և World Vision բարեգործական կազմակերպություններից: Բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ ընտրվեց Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը, գործադիր տնօրեն նշանակվեց Կարեն Նազարյանը:

Միջեկեղեցական բարեգործական Կլոր Սեղան հիմնադրամը կշարունակի գործել Ս. Էջմիածնի տարածքում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ